Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2024թ.դեկտեմբերի 25-ի N 136-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը կազմվել է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթները: Համայնքի բյուջեն հանդիսանում է համայնքի կարևորագույն փաստաթուղթը, տեղական ինքնակառավարման մարմիներին Սահմանադրությամբ և այլ օրենքներով պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գոյացման և ծախսման տարեկան ֆինանսական ծրագիր: Այն մի փաստաթուղթ է, որով կառավարվում և պլանավորվում են համայնքի ակնկալվող եկամուտները, առաջարկվող ծախսերը և դրանց բաշխման ուղղությունները:

Տեղ համայնքի 2025 թվականի բյուջետային միջոցներով նախատեսվող միջոցառումները նախանշվել են հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի 2025-2027թթ.. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, հաշվի առնելով դրանց առաջնահերթությունը, անհետաձգելիությունը, կարևորությունը, տարածքային զարգացման համաչափության անհրաժեշտությունը և առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, որպեսզի պահպանվի ՏԻՄ-երին օրենքով սահմանված լիազորությունների իրականացումը, գործընթացի առավել թափանցիկությունը, սահմանափակ միջոցների խնայողությունը, առկա ռեսուրսների ճիշտ նպատակաուղղումը ի շահ համայնքի:

Տեղ համայնքի 2025 թվականի տրեկան բյուջեն կազմվել է հենվելով համայնքի կողմից կատարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման, սոցիալական , մշակութային, բարեկարգման, շրջակա միջավայրի պաշտպանության, արտաքին լուսավորության ապահովման միջոցառումների իրականացման, համայնքի քաղաքացիական ռոսուրսների պատշաճ պաշտպանվածությանն ուղղված ծրագրերի իրականացման, համայնքի կայուն և աստիճանական զարգացմանն ուղղված քաղաքականության գործուն քայլերի հիման վրա:

Տեղ համայնքը՝ իր յոթ բնակավայրերով լինելով սահմանապահ, իր առաջ ունի առանցքային և կարևորագույն հարց. ապահովել խաղաղ և անվտանգ կենսագործունեության պայմաններ իր բնակիչների համար, ստեղծել նպաստավոր պայմաններ հնարավոր պատերազմական վտանգներից սեփական բնակչության պատշաճ պաշտպանվածության համար:

Տեղ Համայնքի 2025 թվականին համայնքի ներուժի ուղղման հիմնական ուղղություններն են.

- Համայնքի բնակչության պատշաճ պաշտպանվածության ապահովում,
- Բարձրացնել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակազմերի աշխատանքի արդյունավետությունը,
- Նպաստել հասարակական, սոցիալ-տնտեսական կյանքի ակտիվացմանը,

- Ստեղծել նպաստավոր պայմաններ համայնքի բնակիչների հնարավորինս ինտեգրմանը տեղական ինքնակառավարման գործընթացին, հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,
- Բարձրացնել բնակիչներին մատուցվող ծառայությունների որակը,
- Ապահովել համայնքի բյուջեի շարունակական աճը՝ ի հաշիվ սեփական եկամուտների ավելացման և ծախսերի նպատակային ու խնայողաբար իրականացման,
- Ապահովել միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների բարվոք վիճակը, համայնքի աղբահանության աշխատանքների ժամանակին իրականացումը,
- Արտաքին լուսավորության ցանցի արդիականացումը,
- Ոռոգմա և խմելու ջրերի ցանցերի առկայության և մշտապես բարեկարգ վիճակի ապահովումը,
- Պատմամշակութային կոթողների պահպանումը,
- Համայնքում նախադպրոցական կրթության ապահովման մակարդակի բարձրացումը,
- Տնտեսվարողների համար ստեղծել պարարտ հող՝ հողագործությամբ, անասնապահությամբ, ցորենի և այլ գյուղմթերքի արտադրման համար:

Տեղ համայնքի 2025 թվականի բյուջեն ձևավորվել է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, ըստ որի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝

- Տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և այլ օրենքներով ամրակցված լիազորությունների իրականացման համար անհարժեշտ ֆինանսական միջոցների ներգրավումը,
- Պահուստային ֆոնդի ստեղծումը,
- Համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը,
- Խնայողականությունը,
- Արդյունավետությունը,
- Հավաստիությունը և հստակությունը,
- Հրապարակայնությունը:

2025 թվականի տարեկան բյուջեն կազմվել է հաշվի առնելով 2024 թվականի ընթացքում ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի աշխատակիցների կատարած աշխատանքի փաստացի արդյունքերը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում տեղադրված պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրվող դոտացիայի նախնական թիվը, մեր կողմից 2025 թվականին պլանավորվող հարկահավաքության բազային գումարները և տարբեր հարկատեսակների մասով ապառքների հավաքագրման թվերը, ինչպես նաև համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների դիտարկված թվերը:

Արդյունքում Տեղ համայնքի 2025 թվականի բյուջեն իրենից կներկայացնի.

Եկամուտների գծով՝	**370,750,058.00 ՀՀ դրամ,**
Ծախսերի գծով՝	**370,750,058.00 ՀՀ դրամ:**

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԱՍ

Տեղ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտները կազմել են **370,750,058.00** ՀՀ դրամ՝ 2024 թվականի համապատասխան հաստատված ցուցանիշի՝ **288,073,387.00** ՀՀ դրամի և 2023 թվականի համապատասխան փաստացի ցուցանիշի՝ **302,592,165.80** ՀՀ դրամի դիմաց:

Առաջարկվող նախագծով համայնքի եկամուտների ֆոնդը իրենից ներկայացնում է սեփական եկամուտների մաս, պաշտոնական դրամաշնորհներ, դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Տեղ համայնքի 2025 թվականի կանխորոշված 370,750,058.00 ՀՀ դրամի մեջ սեփական եկամուտները կազմում են 90,163,900.00 ՀՀ դրամ՝ հանդիսանալով եկամուտների տեսակարար կշռի 24,3 %-ը: Եթե տանենք վերջին 4 տարիների սեփական եկամուտների վերլուծություն, ապա կստացվի, որ 2025 թվականի կանխատեսվող սեփական եկամուտների թիվը 2024 թվականի հաստատված ցուցանիշից ավել է 1,558,500.00 ՀՀ դրամով, 2023 թվականի համապատասխան ցուցանիշից ավել է 8,476,500.00 ՀՀ դրամով, իսկ 2022 թվականի նկատմամբ՝ 16,266,700.00 ՀՀ դրամով: Համեմատական վերլուծությունը դիագրամի միջոցով կունենա հետևյալ տեսքը.

Դիագրամ N 1



Եվ այսպես Տեղ համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվել են հետևյալ եկամտային աղբյուրներից.

- **Հարկեր և տուրքեր**

2025 թվականին հարկերի և տուրքերի ցուցանիշների կանխատեսման համար հիմք են ծառայել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Հարկային օրենսգիրքը, Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 26-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 130-Ն որոշումը:

Բյուջետային կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի հավաքագրված գումարները, չկատարված հարկային պարտավորություններից ակնկալվող եկամուտները, ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա անշարժ գույքի հարկի գումարները:

Հարկեր և տուրքերը իրենց մեջ մասնավորապես ներառում են՝

- ✓ Հողի հարկը համայնքի վարչական տարածքներում գտնվող հողի համար,
- ✓ Գույքահարկը փոխադրամիջոցների համար,
- ✓ Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար գանձվող տեղական տուրքեր,
- ✓ Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գանձվող տեղական տուրքեր,
- ✓ Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար գանձվող տեղական տուրքեր,

Հարկեր և տուրքերը համայնքի եկամտային մասի տեսակարար կշռում կազմում են **15,38%**-ը:

- **Պաշտոնական դրամաշնորհներ**

Պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող Դոտացիան՝ որպես ոչ նպատակային, պետության կողմից անհատույց տրվող դրամական միջոց , համայնքի բյուջեի վարչական մասի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման աղբյուր 2025 թվականի պետական ծրագրով Տեղ համայնքին կհատկացվի **280,586,158.00** ՀՀ դրամ: Այս ցուցանիշի համեմատական վերլուծությունը նախորդ տարիների նկատմամբ ներկայացված է ստորև.

Աղյուսակ N1

ՀՀ դրամ

Բյուջետային տարի	**ԴՈՏԱՑԻԱ**

2020 թվական	129,567,300.00
2021 թվական	162,325,500.00
2022 թվական	164,124,500.00
2023 թվական	156,131,800.00
2024 թվական	238,433,587.00
2025 թվական	280,586,158.00

- **Այլ եկամուտներ**

Այլ եկամուտներ հատվածը իր մեջ ներառում է.

- Համայնքի սեփականություն համարվող հողերի դիմաց գանձվող վարձավճարներ՝ կազմում է բյուջեի եկամուտների **2,1%**-ը,
- Համայնքի տարածքում աղբահանության իրականացման համար՝ կազմում է բյուջեի եկամուտների **1,1%**-ը,
- Ծնողական միջոցներ՝ կազմում է բյուջեի եկամուտների **1,31 %**-ը,
- Ջրի վարձավճարներ՝ կազմում է բյուջեի եկամուտների **0,4 %**-ը,
- Այլ ոչ հարկային եկամուտներ՝ մասնավորապես համայնքի ենթակայության տակ գործող Կոմունալ Սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ի ծառայությունների դիմաց վարձավճարներ՝ կազմում է բյուջեի եկամուտների **4,05 %**-ը:

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տեղ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսային մասը իրենից կներկայացնի **370,750,058.00** ՀՀ դրամի ֆինանսական միջոցներ: Ծախսերի դրամական այս արտահայտությունը իրենից ներկայացնում է միայն վարչական մասի ֆինանսական հատկացումները: Դրանք բաշխվել հետևյալ ուղղություններով.

- Տեղ համայնքի ղեկավարի աշխատակազմի և կառավարման ապարատի պահպանման ծախսեր՝ **149,436,000.00** ՀՀ դրամ ,
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ **6,000,000.00** ՀՀ դրամ,
- Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներ՝ **2,016,000.00** ՀՀ դրամ,
- Աղբահանություն և շրջակա միջավայրի պահպանություն՝ **23,260,000.00** ՀՀ դրամ,
- Գյուղատնտեսություն՝ **9,560,000.00** ՀՀ դրամ,
- Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում՝ **10,950,000.00** ՀՀ դրամ,
- Ջրամատակարարում և բնակարանային կոմունալ տնտեսություններ՝ **12,500,000.00** ՀՀ դրամ,
- Նախադպրոցական կրթություն՝ **59,500,000** ՀՀ դրամ,
- Հանգիստ, մշակույթ և կրոն ՝ **4,598,058.00** ՀՀ դրամ,
- Ճանապարհային տրանսպորտ՝ **41,300,000.00** ՀՀ դրամ,
- Սոցիալական աջակցություն՝ **3,200,000,00** ՀՀ դրամ,
- Քաղաքացիական պաշտպանության աջակցություն՝ **8,430,000.00** ՀՀ դրամ,
- Համայնքի վարչական մասի պահուսային միջոցներ՝ **40,000,000.00** ՀՀ դրամ:

2025 թվականի Տեղ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները ծախսային հատվածում բաշխվել են ըստ մի շարք սկզբունքներ.

1. ծրագրերի կատարման հնարավորության, անհրաժեշտության, հրատապության և առաջնահերթության,

2. նպատակահարմարության,
3. ռեսուրսների խնայողաբար օգտագործման,
4. համայնքի համար ֆինանսական պատասխանատվություն առաջացնող կնքված և դեռ կնքվելիք պայմանագրերի,
5. համայնքը զարգացման տանող նախանշված տեսլականի:

2025 թվականի բյուջեի նախագծով չեն ներառվել իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերը: 2024 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո, համայնքի ավագանու որոշմամբ կսահմանվեն համայնքի Ֆոնդային բյուջե ուղղման ենթակա ֆինանսական միջոցները:

Աղյուսակ N 2

ՀՀ դրամ

Ծախսեր	Ընդամենը ծախսեր	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր
2025 Կանխատեսվող	370,750,058.00	370,750,058.00	
2024 Հաստված	366,217,622.00	330,188,874.00	36,028,748.00
2023 Փաստացի	490,249,430.80	429,092,729.30	61,156,701.50

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ